ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1963 Общественные науки

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС

Ամսագրի վեցերորդ համարում պարտիայի պատմության բազմահատորյակի առաջին հատորի եզրափակիչ գլխի շարունակությունից հետո (էջ 3—24) տեղավորված է Ի. Ա. Գլադկովի հոդվածը: Այն ցույց է տալիս, թե ինչպես է Վ. Ի. Լենինը 90-ական թվականների իր աշխատություններում, հատկապես «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» երկում, մշակել ու հիմնավորել է մարքսիստական պարտիայի ծրագրի ու տակտիկայի կարևորագույն դրույթները: Հոդվածը բաժանված է երեք հատվածների:

Կոմունիզմի ծավալուն շինարարության ժամանակաշրջանում բանվոր դասակարգի ղեկավար դերի մի քանի հարցերի քննարկմանն է նվիրել իր հոդվածը Ն. Գ. Քրիստոստուրյանը: Պարտիայի ծրագրի նոր դրույթների հիման վրա, մասնավորապես ելնելով այն թեզից, ըստ որի բանվոր դասակարգը միակ դասակարգն է, որն իր տիրապետությունը հավերժացնելու մեջ նպատակ չի տեսնում, հեղինակը մատնանշում է այն բնորոշ գծերն ու կողմերը, որոնց մեջ դրսևորվում է բանվոր դասակարգի առաջատար դերը և որոնք պետք է առանձին-առանձին ուսումնասիրվեն: Ըստ որում նա շեշտում է, որ բանվոր դասակարգի ղեկավար դերը միշտ չէ որ ենթադրում է նրա դիկտատուրայի իրագործումը: Բանվոր դասակարգի իշխանության, նրա տիրապետության մասին հարցը կապված է նրա դիկտատուրայի հետ, իսկ կոմունիզմի շինարարության մեջ նրա ղեկավար դերի հարցը միայն որոշակի էտապում է համընկնում նրա տիրապետության մասին հարցի հետ: Դա, իհարկե, չի իջեցնում, այլ ընդհակառակն ավելի լայն ու բազմակողմանի է դրսևորում այդ ղեկավար դերի նշանակությունը կոմունիզմի ծավալուն կառուցման ասպարեզում, երբ պրոլետարիատի դիկտատուրան դադարում է անհրաժեշտություն լինելուց, երբ առկա է համաժողովրդական պետությունը:

Ա. Կ. Կոլեսնիկովի հոդվածը, որը կրում է «Ձեռնարկություններում պարտիական վերահսկողության ծավալումն ու կատարելագործումը» խորագիրը, նպատակ ունի ընդհանրացնելու նյութական արտադրության ասպարեզում կիրառվող պարտիական վերահսկողության փորձը: Գլխավորապես հենվելով վերջին տարիների նյութերի վրա, հեղինակը մասնավորապես ընդգծում է, որ պարտիական վերահսկողությունը կարևորագույն միջոց է աշխատավորների լայն մասսաներին արտադրության ղեկավարման ասպարեզում ընդգրկելու համար:

1912—1914 թվականներին պարտիան հսկայական աշխատանքի ծավալումով կարողացավ կիսապրոլետարական մասսաներին ազատել լիբերալ բուրժուազիայի ազդեցությունից: Այդ պայքարում մեծ դեր է կատարել լեգալ բանվորական մամուլը և հատկապես լենինյան «Պրավդան»: Ինչպե՞ս է պարտիան օգտագործել պրոֆեսիոնալ մամուլը ծառայողների ոգեշնչիչ դաստիարակության և կազմակերպման համար՝ 1912—1914 թվականներին: Այս խնդիրն է իր առջև դրել Ի. Ս. Ռոզենտալը, որը հանդես է եկել հաղորդումներ բաժնում: Հեղինակը լայնորեն օգտագործել է տեղական մամուլն ու արխիվային նյութերը:

Մեր պարտիայի վերջին համագումարների որոշումներով գյուղատնտեսության էլեկտրոֆիկացման ծավալուն ծրագիր է առաջադրվել: Այն իրագործելու համար մի շարք տեղական պարտիական կազմակերպությունների ծավալուն պայքար լուսաբանելու փորձ են արել Դ. Ի. Կորկոցենկոն և Վ. Ս. Ուշակովը: Նրանք մի շարք մարզային պարտիական կազմակերպությունների օրինակով, ինչպես նաև միութենական ռեսպուբլիկաներում այդ ուղղությամբ տարված աշխատանքներով ցույց են տալիս այն վճռական դերը, որ կատարում է գյուղատնտեսության էլեկտրոֆիկացիան սովետական գյուղում կոմունիստական հասարակական հարաբերություններ հաստատելու բնագավառում:

Այս համարում հատուկ նյութեր են զետեղված Վալտեր Ուլբրիխտի ծննդյան 70-ամյակի և Ն. Ալ. Վսղենսենսկու (1903—1950) 60-ամ-

դակի առթիվ: Տալով արտակարգ սկզբունքային, երկաթյա կամքի տեր և հսկայական էրուդիցիա ունեցող կոմունիստ-գործչի կյանքի ու աշխատանքային ուղու համառոտ ուրվագիծը, Ն. Ալ. Վոզնեսենսկուն նվիրված հոդվածի հեղինակը հատուկ կանգ է առնում նրա աշխատությունների վրա, ցույց տալիս նրա մեծ դերը երկրի էկոնոմիկայի զարգացման գործը ճիշտ պլանավորելու և զարգացնելու բնագավառում: ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ն Ա. Վոզնեսենսկին 1947 թ. հրատարակել է մեր երկրի ռազմական տնտեսությանը նվիրված գիրքը, որը չնայած իր մի քանի էական թերություններին ու պարունակած թեորետական որոշ սխալ դրույթներին, ամբողջությամբ վերցրած արժեքավոր էր: «Կարճ ժամանակաշրջանում,— գրում է հեղինակը,—գիրքը ընթերցողների լայն շրջան նվաճեց: Բայց շուտով էլ նրա այդ մասսայականությունը դժգոհություն պատճառեց Ստալինին, որը թեորիայի բնագավառում իրեն օրենսդիր էր համարում: Գիրքը հայտարարվեց հակամարքսիստական ու հակագիտական և արգելվեց: 1949 թ. սկզբին Ն. Ալ. Վոզնեսենսկին հանկարծակի հեռացվեց բոլոր պարտիական ու պետական գործերից, հանվեց Քաղբյուրոյի, ապա և պարտիայի Կենտկոմի կազմից: Նա մինչև անգամ զրկված էր աշխատելու ճնարավորությունից: Նա Ստալինին է ուղարկում մեկ, երկու, երեք..., գրություն, բայց պատասխան չի ստացել: «Դա ինչ որ բյուրիմացություն է,—ասում էր նա իր ընտանիքի շրջապատում,— մինչ Ստալինը կպարզի պետք չէ ժամանակ կորցրնել»: Եվ Վոզնեսենսկին շարունակում էր աշխատել «Կոմունիզմի քաղաքատնտեսություն» նոր դրքի վրա... Բայց նրա այդ աշխատանքն անավարտ մնաց: 1950 թ. Ն. Ա. Վոզնեսենսկին զոհվեց, դառնալով Ստալինի անձի պաշտամունքի ժամանակ իշխող կամայականության զոհը:

Այդ բաժնում տեղավորված մյուս բդրակցությունը ևս նվիրված է անհատի պաշտամունքի զոհերից մեկին, 1937 թ. գրպարտված և ռեպրեսիաների ենթարկված Մ. Մ. Խատաևիչին, որը մեր պարտիայի նշանավոր գործիչներից մեկն էր: Պատանի հասակից պարտիական աշխատանք կատարելով, նա զբաղեցրել է մի շարք ղեկավար պաստեր, ընտրվել է Ուկրաինիայի կոմպարտիայի Կենտկոմի երկրորդ քարտուղար: Սկզբունքային կոմունիստ լինելով, նա հանդես էր գալիս ամեն կարգի խեղաթյուրումների դեմ, իր կրակոտ խոսքն է ասել կոլեկտիվացման գործում տեղ գտած աղավաղումների, սովետական մարդկանց «մեռայինների և ուրիշների» բաժանողների, իրենց ապահովագրողների դեմ. նա հաճախ հրապարակային ելույթներում մատնացույց էր անում մարդկանց նկատմամբ դրսևորվող կամայականությունները: 1937 թ. Ուկրաինիայի կոմպարտիայի 13-րդ համագումարում Խատաևիչը կոչ էր անում վերջ տալ ազնիվ մարդկանց նկատմամբ կիրառվող բռնություններին, քննադատության համար մարդկանց «ժողովրդի թշնամի» պիտակ տալու ճակատագրական մեթոդներին:

Ազնիվ կոմունիստի անունը վերականգնվեց պարտիայի 20-րդ համագումարից հետո:

«Պատմագիտության և աղբյուրագիտության» բաժնում տեղավորված ինֆորմացիայում տարվում է Կրասնոյարսկի պարտիական արխիվի 1953—1958 թթ. ֆոնդերի տեսությունը: Ինչպես միշտ, այս անգամ ևս հարուստ է ամսագրի «Քննադատություն և բիբլիոգրաֆիա» բաժինը, ուր մասնավորապես գրախոսված են Ն Ս. Խրուշչովի ճառերի և ելույթների 6-րդ և 7-րդ հատորները: Վ. Զնվինի և Շ. Մամեդովի գրախոսականում բարձր է գնահատված Վ. Յու. Սամեդովի «Մարքսիզմ-լենինիզմի տարածումը Ադրբեջանում» (Բաքու, 1962, 763 էջ), «լուրջ մոնոգրաֆիկ ուսումնասիրությունը», որը «լուրջ ավանդ է պատմա-պարտիական և պատմա-փիլիսոփայական գրականության մեջ»: Այդ բաժնում տպագրված է նաև Իտալիայի կոմպարտիայի նոր տեսական ամսագրի մասին ինֆորմացիա, ինչպես նաև «Անոտացիաներ»: Ամսագրում լայն տեղ է տրված իդեոլոգիական աշխատողների զոնալ խորհրդակցությունների արդյունքներին նվիրված հաշվետվությանը:

Ամսագրի հինգերորդ համարն առաջնորդում է «Արդիականության բեմաներով» ընդարձակ բաժինը, որտեղ քննվում են սոցիալիստական ռեալիզմի բազմաբիվ պրոբլեմներ:

«Կոմունիստական գաղափարայնության դրոշի ներքո» հոդվածում Վ. Լիավինովը կանգ է առնում ժամանակակից գրականագետների մի շարք տեսական ուսումնասիրությունների ու հոդվածների վրա, ցույց է տալիս դրանց լուսավոր ու ստվերոտ կողմերը, և առաջ է քաշում սոցիալիստական ռեալիզմի հետ ուղղակիորեն առնչվող այսպիսի խնդիրներ՝ ինչպիսի՞ն են ազգային գրականությունների յուրահատկությունները, ինչպե՞ս են ժամանակակից ստեղ-

ծագործական պրակտիկայում խորացվում և բովանդակավորվում դասական գրականության լավագույն տրադիցիաները, ինչպե՞ս են պահպանվում և բազմապատկվում մեր սեփական նորարարական նվաճումները, որոնք երկար տարիների ընթացքում տրադիցիայի ուժ են ստացել, ինչպիսի՞ն է այսօր հայտնագործված գեղարվեստական ձևերի և միջոցների էսթետիկական յուրահատկությունը, ինչպիսի՞ն է մեթոդի և ոճային ուղղվածության միջև դիալեկտիկական կապը ու փոխադարձ առնչությունը և այլն:

«Ես վարժվել եմ գրականությանը դիտել որպես ռևոլյուցիոն գործ»: Մ. Դորկու այս խոստովանությամբ է սկսում «Ռևոլյուցիոն արվեստի գեղեցկությունն» իր հոդվածը Ա. Դուբրովինը: Հոդվածում մանրամասնությամբ քննվում և բովանդակավորվում են գեղարվեստական ստեղծագործության պարտիականության և գեղեցկության հետ ուղղակիորեն կապված բազմաթիվ հարցեր, ինչպես նաև՝ գրականության դաստիարակչական նշանակությունը, արվեստի ժողովրդայնությունը և գրողի հասարակական դերը:

Արդի արձակի վերաբերյալ իր դիտողություններն է անում Դ. Լոմինենն «Ռեալիզմի ուժը» հոդվածում: Սոցիալիստական ռեալիզմի արվեստը աներկբայելիորեն իր մեջ է ներառնում բազում գեղարվեստական միջոցներ և ձևեր՝ դարի նշմարտությունը կերպավորելու համար: Այս ելակետից էլ հեղինակը ոճային ու գաղափարական վերլուծության է ենթարկում Յուստինաս Մարցինկյավիչյուսի «Եղևնին. որը ծիծաղում էր», Մ. Ստելմախի «Ճշմարտությունը և սուտը», Դ. Մարկովի «Հայրը և որդին», Ա. Զակովսկու «Հեռավոր աստղի լույսը», Ռ Պոլևոյի «Ամայի ցամաքի վրա» վեպերն ու վիպակները և ուրիշ գործեր:

«Դարաշրջանով ծնված մեթոդը» հոդվածում Ն. Դեյը փորձ է անում գիտականորեն հիմնավորել սոցիալիստական ռեալիզմի ծագումը, զարգացումը և վերջնական կազմավորումը: Նրա եզրակացությունն է, սոցիալիստական ռեալիզմը ոչ թե դատարկ տեղում անսպասելիորեն հառնած երևույթ է, այլ՝ ժողովուրդների կուլտուրաների բոլորած պատմության տրամաբանական շարունակությունը, որ խթանվել է 20-րդ դարի սոցիալական և քաղաքական մեծ իրադարձություններով:

Ամսագրի հինգերորդ համարում հատուկ հետաքրքրություն է ներկայացնում «Գրողի վարպետությունը» բաժինը: «Ինչի՞ց է սկսվում գրողի «վարպետությունը»: Լեզվի՞ց, ոճի՞ց, սյուժեի՞ց, զուցե ինտոնացիայի՞ ռիթմի՞ց,— հարցնում է ամսագիրը և նույն տեղում պատասխանում:—Ոչ, զգալիորեն վաղ. վարպետությունը սկսվում է կյանքի ճանաչողությունից, կյանքը գեղարվեստորեն տեսնելուց և հասկանալուց»: Այս նույն տեսակետին են նաև բազմաթիվ գրողներ, որոնց խմբագրությունը դիմել է կյանքի հետ գեղարվեստական ստեղծագործության կապի վերաբերյալ մի շարք հարցերով: Ալեքսանդր Ավդեենկոն խոստովանում է, որ իր «Սև զանգեր» վեպի հրապարակ գալու պատճառը ոչ այնքան սեփական նախասիրությունն է եղել, որքան՝ կյանքի պահանջը: «Գրելու համար հարկավոր է լավ տեսնել կարողանալ,—ասում է Դեորգի Բերեզկոն:—Ինձ թվում է, որ տեսնելու կարողության մեջ է բաքնվում և նորարարության գաղտնիքը: Որովհետև իսկական նորարարությունը դա ձգտումն է հնարավորին չափ որոշակի, ամբողջականորեն, նշմարիտ պատմել այն նորի մասին, որը յուրահանչյուր օր, ըստ էության, ռեալ կյանքում բացվում է մեր առջև»: Իր «երկու կյանք» վեպի ստեղծագործական համառոտ պատմությունն է անում Սերգեյ Վորոնինը: Այստեղ հատկապես ուշագրավ է գեղարվեստական կերպարի վերաբերյալ գրողի հայացքը: «Ես ոչինչ չեմ ավելացրել, ոչնչով չեմ զունազարդել նրանց, ովքեր աշխատում էին ինձ հետ կողքկողքի այն առաջին որոնումներում: Ես նրանց մասին այնպես ասացի, ինչպես կար: Լավ մարդկանց չպետք է հնարել, նրանց հարկավոր է տեսնել, նրանք կան: Եվ կյանքը հնարել պետք չէ, հարկավոր է այն սիրել, և այն ժամանակ գրողին միշտ հաջողություն է սպասվում:

Դժվար է մեկ առ մեկ կանգ առնել կյանքի և գրականության կապի մասին այս բաժնում բերված բոլոր կարծիքների ու տեսակետների վրա: Սակայն մի բան պարզ է ու որոշակի. կյանքը գեղարվեստական ստեղծագործության մեջ է մտնում հենց սկզբից, կյանքն է և՛ կերպարի, և՛ սյուժեի, և՛ ոճի, և՛ նորարարության, և՛ ամենը ինչի նշտության ու կատարելության միակ չափանիշը:

Վերոհիշյալ բաժնում զետեղված է նաև Վ. Կարդինի «Հերոսի երկրորդ ծնունդը» հոդվածը, որտեղ բազմակողմանի քննության է ենթարկվում Պ. Նիլինի «Դաժանություն» վերնագրով վիպակը:

«Բանավեն» բաժնում տեղ են գտել Ու. Դուբալենիկի «Սովետական գրականության հարձակողական ոգին» և Իլյա Ֆրադկինի «Բանասիրությունը ոստիկանական փաստաթղթերից» հոդվածները: Առաջինում բարձր է գնահատվում Մոսկվայի համալսարանի հրատարակած «Ռուս գրականության պատմության վերաբերյալ բուրժուական և ոճիզիոնիստական հայացքների դեմ» հոդվածների ժողովածուն, որտեղ սկզբ-

բունքային գիրքերից ջախջախիչ քննադատության են ենթարկված Ա. Ստենդեր-Պետերսենի, Վ. Լետենբաուերի, Ռ. Պոդժոլի և այլոց տեսանետները: Երկրորդ հոդվածը պաշտպանում է գերմանացի նշանավոր դրամատուրգ Բերտոլտ Բրեխտին՝ արևմտյան աջխարհի «բատերագետների» մոլի հարձակումներից:

«Հրապարակումներ և հաղորդումներ» վերտառության տակ տպագրված են Իոհաննես Ի. Բեխերի ասույթները ստեղծագործական մեթոդի մասին և Թեոդոր Դրայզերի մեծամասնակ նամակներից մի քանիսը: Այստեղ ընթերցողը նամակներ կդտնի ուղղված ամերիկյան քննադատ Գ. Լ. Մենկենին, ժուռնալիստ Էդուարդ Ռ. Սմիթին, նկարիչ Ֆրանկլին Բուտին, դրամատուրգ և սցենարիստ Ջոն Գոլդենին, սովետական հրապարակախոս, «Ինտերնացիոնալ գրականություն» ամսագրի խմբագիր Տիմոֆեյ Ռոկոտովին և ուրիշների: Նամակներում հետաքրքիր փաստեր, տեղեկություններ կան մեծ գրողի կյանքի և գրական-քաղաքական հայացքների վերաբերյալ:

Հարուստ է ամսագրի «Ակնարկներ և գրախոսություններ» բաժինը: Այստեղ նյութեր են զետեղված Գ. Ֆրիդլենդերի «Մարքսն ու Էնգելսը և գրականության հարցերը», Ի. Էվենտովի «Սրգիծանքը Մ. Գորկու ստեղծագործություններում», Ն. Վլադիմիրովի և Մ. Սուլթանովի «Սովետաուզբեկական պատմվածքը» և ուրիշ գրքերի մասին:

Ամսագրի հինգերորդ համարը փակվում է «Կատակով և լուրջ» բաժնով:

ԱՄՍԱԳՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ համարը սկսվում է ավանդությունների և նորարարության շուրջը ծավալված բանավեճը ամփոփող խմբագրական ընդարձակ հոդվածով: Խմբագրությունը պաշտպանում է այն տեսակետները, որոնցում խոր ակնածանք կա ավանդությունների հանդեպ, կենդանի, ստեղծագործական վերաբերմունք՝ դեպի դասական ժառանգությունը: Ավանդությունը, դա կենդանի, ներկայի հետ ուղղակիորեն շփվող և դեպի գալիքը գնացող երևույթ է: Անցյալի մեծ արվեստի նշմարիտ ավանդությունները միշտ էլ տաղանդավոր գրողների համար անդավաճան ճենարան են եղել, օգնել են նրանց նոր նպատակներ յուրացնելու դժվարին ճանապարհներին: «Միայն նորարարը կարող է ավանդությունների շարունակող լինել»—դիպուկ նկատում է ամսագիրը:

«Ապրել, այսինքն ստեղծել, աշխատել...» հոդվածում Բ. Բրայնինան հանգամանալից խոսք է բացում աշխատանքային բեմայի, մեր գրականության մեջ աշխատանքի մարդու շուրջը: Այս առիթով նա անդրադառնում է Ա. Բելեկեմչուկի «Ջահել է, խակ է» վիպակին, Ֆ. Գլադկովի «Ցեմենտ» վեպին, Վ. Վոյնովիչի «Ուզում եմ ազնիվ լինել» պատմվածքին և ուրիշ գործերի: Գրողի համար ավելի ազնիվ և գեղեցիկ նպատակ չի կարող լինել, քան աշխատանքի ու մարդասիրության գեղարվեստական ցուցադրումը:

«Ժամանակակից թեմաներով» բաժնում զետեղված են նաև Ս. Մաշինսկու «Արվեստը գրողի աշխերով» և Բ. Նեվսկայայի «Սովետական արևելքի գրականությունը արտասահմանյան բարեկամների և բշնամիների աշխերով» հոդվածները: Առաջինում խոսվում է Կ. Ֆեդինի «Գրողը, արվեստը, ժամանակը» տեսական հոդվածների ժողովածուի մասին, երկրորդում մեջ են բերվում և գնահատվում արտասահմանյան մի շարք գրողների և գրականագետների կարծիքները՝ Արևելքի տարբեր ժողովուրդների ժամանակակից մշակույթի վերաբերյալ:

Հեյնց Պլավիուսի «Հումանիզմի ռևիզիան Արևմտյան Գերմանիայում» հոդվածը շոշափում է թեորիայի հետ ուղղակիորեն առնչվող հարցեր. ի՞նչը և ինչպե՞ս է ժամանակակից արևմտագերմանական մտածողների մոտ խեղաթյուրվում, կեղծվում, գլխիվայր շուռ գալիս:

«Գրականության պատմություն» խորագիրը պարունակում է Բ. Բյալիկի «Ի՞նչ է «XX դարի ռուսական գրականությունը» հոդվածը, որտեղ խոսվում է Ռուսաստանում գրական տարբեր ուղղությունների, դրանց փոխհարաբերությունների, գրականության մայրուղու և այլնի մասին՝ սկսած անցյալ դարի 90-ական թվականներից, երբ ավարտվում է խոշորագույն ռեալիստներ Լ. Ն. Տոլստոյի և Ա. Պ. Չեխովի ստեղծագործական ուղին, ու վերջացրած մեր օրերով, երբ սոցիալիստական ռեալիզմը կանգնում է նոր հորիզոնների առաջ:

«Արտասահմանյան գրականություն» բաժնում զետեղված են Էրասմո Բարիոս Վիլլայի, Թ. Կարլայլի, Մահմեդ Մանդուրի, Խիրոսի Նոմայի և այլոց պատասխանները խմբագրության այն հարցին, թե ո՞րն է, իրենց կարծիքով, գրականության դերը և նշանակությունը խաղաղության համար մղվող պայքարում, ինչպիսի՞ հրատապ պրոբլեմներ կան գրականության զարգացման ներկա փուլում:

Բ. Ռեիլովը «Վալտեր Սկոտը և պատմության մի քանի հարցեր» հոդվածում քննում է շոտլանդացի մեծ գրողի ստեղծագործությունը, ցույց է տալիս դրա և ազգային կյանքի, պատմության, կենցաղի, սովորույթների, մտածողության ուղղակի կապը, այդ ամենի հեղափոխական նշանակությունը Եվրոպական գրականության համար:

«Գրողի վարպետությունը» խորագրի տակ համառոտ կարծիքներ են տպագրված Վլադիմիր

Մայակովսկու ստեղծագործության մասին: Ահա դրանցից մի քանիսը հատվածաբար. «Մայակովսկին կար, Մայակովսկին կա, Մայակովսկին կլինի» (Պավել Անտոկոլսկի): «Նա նոր դարաշրջանի բանաստեղծ է» (Վիկտոր Բոկով): «Ես երազում եմ գրել այնպես, ինչպես գրում էր Մայակովսկին» (Նաիրի Զարյան): «Նա իմ պատկերացումներում ջնջեց կյանքի ու պոեզիայի սահմանները, ինձ՝ պատանիիս համար պարզելով, որ պոեզիան այդ կյանքն է, իսկ կյանքը՝ պոեզիան» (Լեոնիդ Մարտինով): «Կարծում եմ, որ բանաստեղծների և ժողովուրդների սերը նրա նկատմամբ՝ կփոխանցվի դարերին» (Ալեքսանդր Պրոկոֆև): «Ես հանդիպել եմ մարդկանց, որոնք ինձ ասում էին, որ իրենք Մայակովսկուն չեն սիրում: Եվ ես խղճում եմ նրանց: Ինչ որ բանում այդ մարդիկ լիարժեք չեն» (Ռոբերտ Ռոժդեստվենսկի):

Այստեղ տպագրված են նաև Էմ. Կազակևիչի մի շարք նամակները և գրառումները, Ե. Էտկինդի «Ուսանելի փորձ» բիբլիոգրաֆիական նկատողությունը՝ Պուշկինի պոետական յուրահատկությունների մասին:

Հարուստ է ամսագրի 6-րդ համարի «Տեսություններ և գրախոսություններ» բաժինը: Ս. Վայմանը քննում է վերջին տարիներս երկրի տարբեր քաղաքներում հրատարակված շուրջ 50 գրականագիտական գրքեր, որոնցից ոչ բոլորն են ժամանակակից հրատապ հարցեր ընդգրկում: Հոդվածների մեծ մասը կամ զուտ պատմական, կամ զուտ թեորիական ուղղություն ունեն: Տեսության հեղինակը իրավացիորեն պահանջում է պատմության և թեորիայի համատեղում, փոխադարձ շփում, գրականագիտական ուսումնասիրության մեջ դրանց համաձայնեցում՝ ավելի բարդ ու ընդհանրական խնդիրներ լուծելու համար: Ընթերցողը գրախոսություններ կկարդա Ն. Արալկինի՝ «Արվեստագետը և ռևոլյուցիան», Ի. Կ. Կուզմիչևի՝ «Պատերազմական տարիների ռուսական գրականության ժանրերը», Ա. Վենցլովայի՝ «Դարաշրջանի քամին», Էվալդ Սոկոլի՝ «Ռայնիս», Վ. Վ. Իվաշևայի՝ «Վերջին տասնամյակի (1950—1960) անգլիական վեպը և ուրիշ գրքերի մասին:

«Էրատո» բաժնում գրականագետներ Ա. Անաստասևը, Ի. Բերնշտեյնը, Ա. Բուշմինը, Ա. Դիմշիցը, Ն. Զայցևը և այլք պատմում են իրենց ստեղծագործական ծրագրերի մասին:

Ն. Ա.

Вопросы ФИЛОСОФИИ

Ամսագրի 6-րդ համարը բացվում է Է. Վ. Թադևոսյանի «Սոցիալիստական ազգերի հետագա մերձեցումը ՍՍՌՄ-ում» հոդվածով: Հոդվածագիրը այստեղ ընդգծում է, որ ՍՍՌՄ-ում կոմունիզմի ծավալուն կառուցման ընթացքում է՛լ ավելի է ընդլայնվում ու խորանում սոցիալիստական ազգերի փոխադարձ շփումը: Դրանում կարևոր դեր է խաղում բնակչության շարժման ուժեղացումը: Բնակչության մեջ ռեսպուբլիկական տեղաշարժերը մասնավորապես արտահայտում են մեր երկրի ժողովուրդների եղբայրական փոխադարձ օգնությունը, նրանց ընդհանուր ձգտումը՝ ավելի լիիրավ ինտերնացիոնալ ձևով միավորել իրենց աշխատանքային ռեզերվները և նյութական միջոցները՝ կոմունիստական շինարարության ընդհանուր շահերի համար: Հոդվածը նվիրված է բնակչության տեղաշարժման ուժեղացման պրոբլեմի և սոցիալիստական ազգերի ծաղկման ու մերձեցման մեջ այդ գործոնի ունեցած դերի բացահայտմանը:

Ակադեմիկոս Մ. Բ. Միտինը ամսագրում հանդես է եկել «Մարքս-լենինյան իմացաբանությունը և նշանի ու նշանակության պրոբլեմը» հոդվածով: Արծարծվող հարցը վերջին ժամանակներս իր վրա է հրավիրել մարքսիստների լայն շրջանների ուշադրությունը: Նրա հետ կապվում են մի ամբողջ խումբ հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն փիլիսոփաների, լեզվաբանների, տրամաբանների և հոգեբանների համար: Մտածողության էությունը, և ընդհանրապես մարդկային գործունեության բնույթը խոր հասկանալու համար անհրաժեշտ է բացահայտել նշանների ֆունկցիաները: Ի մի բերելով և քննադատորեն վերլուծելով աշխարհի գիտնականների կարծիքները այդ հարցում, հեղինակը տալիս է քննարկվող պրոբլեմի մարքս-լենինյան գնահատականը:

Նույն հարցին է վերաբերում Ի. Ս. Նարսկու՝ «Նշանակման պրոբլեմը և նրա նեոպոզիտիվիստական լուծումների քննադատությունը» հոդվածը:

Ի. Վ. Կուզնեցովը իր «Ֆիզիկական տեսությունների փոխադարձ կապը» հոդվածում քննարկել է նրանց փոխադարձ կապերի զանազան ձևերը, ֆիզիկական տեսությունների հա-

ջորդականությունը՝ կապված ֆիզիկայի զարգացման տարբեր էտապների հետ: Գլխավոր ուշադրությունը հեղինակը կենտրոնացրել է էլեմենտար մասնիկների տեսության վրա:

Գիտնականների, հատկապես փիլիսոփաների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի «ժամանակակից աստղագիտության պրոբլեմները և միկրոաշխարհի ֆիզիկան» խոր գիտական հոդվածը: Քննության առնվող պրոբլեմին անդրադառնալուց առաջ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը մատնանշում է գիտնականի աշխարհայացքի նշանակությունը:

Գիտական աշխարհայացքը, — դրում է նա,—հաճախ մեծ նշանակություն ունի բնագիտության, այդ թվում նաև տիեզերագիտության խոշոր հարցերից շատերը դնելու և լուծելու համար: Փիլիսոփայական որոշակի հայացքների առկայության դեպքում մշակվում է նաև բնական գիտությունների առջև ծառացող կոնկրետ հարցերը լուծելու համապատասխան մոտեցում: Դա հնարավորություն է տալիս հրաժարվելու կանխակալ կարծիքներից և ոչ ճիշտ համոզմունքներից, որոնք պայմանավորված են այս կամ այն հետազոտողի փիլիսոփայական անբավարար գիտելիքներով կամ լ նրանով, որ վատ փիլիսոփայությունից է օգտվում:

Դիալեկտիկական մատերիալիզմը հիմնավորելով այն թեզը, որ մատերիան դեպի խորքն անսահման է, անսպառելի, որ մատերիական աշխարհի հատկությունները բազմազան են, հետազոտողին ստիպում է շարունակ որոնել բնության նոր, դեռևս չբացահայտված օրինաչափությունների դրսևորումներ և գտնել խոր կապեր այնպիսի երևույթների միջև, որոնք առաջին հայացքից միշ ընդհանուր բան ունեն միմյանց հետ: Մասնավորապես Տիեզերքի կառուցվածքին, երկնային մարմինների ծագմանն ու զարգացմանը վերաբերվող սկզբունքային հարցերը քննության առնելիս, փիլիսոփայական աշխարհայացքը կարող է շատ մեծ, իսկ երբեմն էլ վճռական դեր խաղալ: Մատերիական աշխարհի տարբեր երևույթների միջև գոյություն ունեցող կապերի բազմազանության ու խորության օրինակ կարող է ծառայել աստղային Տիեզերքի և միկրոաշխարհի ֆիզիկայի որոշ օրինաչափությունների կապը:

Այդ ելակետով Վ. Հ. Համբարձումյանը իր հոդվածում քննության է առնում հիշյալ կապի մի քանի կողմերը:

Յա. Ֆ. Ասկինը (Սարատով) հանդես է եկել «Ժամանակ և հավերժություն» հոդվածով:

Զանազան բնական ու սոցիալական երևույթների ու պրոցեսների մեջ մոդելացման մեթոդների հարցում քիմիայի նշանակությանն է նվիրված Յու. Ա. Ժդանովի (Դոնի-Ռոստով)՝ «Մոդելացումը օրգանական քիմիայում» հոդվածը:

Սովետական երիտասարդի բարոյական հատկանիշները, նրա ձգտումներն ու իդեալները է բացահայտված Մ. Խ. Իգիթխանյանի՝ «Սովետական երիտասարդության հոգեկան կերպարը» հոդվածում, իսկ Լ. Վ. Կոնովալովան շատ համառոտ ներկայացրել է ԴԴՌ-ի երիտասարդության առօրյան և իդեալները:

Յու. Ի. Սոլովյովը իր «Նոր նյութեր՝ Օստվալդի էներգետիկական ուսմունքի դեմ ականավոր ֆիզիկոսների և քիմիկոսների պայքարի մասին» հոդվածում արխիվային չհրապարակված փաստաթղթերի հիման վրա մերկացնում է Օստվալդի փիլիսոփայության ռեակցիոն տեսությունը: Ժամանակակից կապիտալիստական աշխարհի փիլիսոփայության մեջ լայն տարածում ստացած օտարման տեսության ռեակցիոն էությունն է վեր հանված Տ. Ի. Օյզերմանի՝ «Մի ռեակցիոն բուրժուական լեգենդի մասին» հոդվածում:

Մ. Կ. Մամարդաշվիլին հանդես է եկել «Դիալեկտիկայի էկզիստենցիալիստական հասկացության քննադատության շուրջը» հոդվածով:

Բուրժուական գաղափարախոսության ճգնաժամն ու քրիստոնեական եկեղեցու բողոքական ուղղությունը փիլիսոփայությամբ հիմնավորելու նրա ճիգերի ապարդյունությունն է արտացոլված Դիտեր Ռեզների (ԴԴՌ)՝ «Բողոքականությունը և բուրժուական իդեոլոգիայի ճգնաժամը» հոդվածում:

Դ. Մ. Ուգրինովիչը իր «Ժամանակակից աստվածաբանության ձախողությունները» հոդվածում այժմեական փաստերով ցույց է տվել աստվածաբանության լրիվ սնանկությունը: Այն այժմ ամբողջովին զինվորագրվել է ռեակցիոն եկեղեցուն և իմպերիալիզմին:

19-րդ դարի առաջին քառորդի ռուսական փիլիսոփայական մտքի պատմության վերլուծությունն է տրված Զ. Ա. Կամենսկու «Դիալեկտիկական գաղափարները ռուսական փիլիսոփայության մեջ 19-րդ դարի սկզբին»:

Ամսագրի «Գիտական հաղորդումներ և բրապարակումներ» բաժնում զետեղված է Ա. Գ. Խարշևի (Լենինգրադ) «Սոցիոլոգիական հետազոտությունները Լեհաստանում» հաղորդումը:

Ամսագիրն ունի նաև «Գիտական կյանք» և «Գրախոսություն և քննադատություն» բաժիններ, որոնցում հետաքրքիր նյութեր ու դիտողություններ կան փիլիսոփայական մտքի զարգացման շուրջը:

Ա. ԱՍՐՅԱՆ